ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

1901 ՏԱՐՒՈՅ

ԲԱԶՄԱՎԷՊի խմբագրութիւնը նախ շնորհակալութիւն կը յայտնէ՝ նախորդ և այս տարուան մէջ զգալի համակրութիւն մը տեսնելուն մեր սիրելի հասարակութենէն. համակրութիւն մը որ երեւցաւ օր աւուր վրայ բաժանորդաց բազմանալէն. և ասոր փոխարէն ԲԱԶՄԱՎԷՊ պարտք կը համարի դեռ աւելի հետաքրքրական լինելու իր ազնիւ բաժանորդաց։ Ուստի ԲԱԶՄԱՎԷՊ առաջիկայ 1901ի առաջին ամիսէն սկսեալ, հետեւեալ ուղղութեամբ կը հրատարակուի.

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊը կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբն։ Կը պարունակէ նախ խմբագրական առաջնորդող յօդուած մը. յետոյ Հայ մատենագրական, ստուգաբանական, պատմական, լեզուաբանական, աշխարհագրական, հնախօսական յօդուածներ, և Հանդէս հանդիսից տիտղոսով գրական և բանասիրական թերթերու վրայ կարեւոր տեսութիւնք, և Ազգային քրոնիկ վերնագրով հետաքրքրական կարեւոր նոր տեղեկութիւնք մեր ժամանակակից գրական և ընկերական կենաց վրայ։ ԲԱԶՄԱՎԷՊ՝ այս տարուան իբրեւ նորութիւն, պիտի հրատարակէ թրքահայ գրական և այլ նշանաւոր անձանց համառօտ կենսագրութիւնը, յիշելով անոնց հեղինակութիւնք և տպելով անոնց կենդանագիրն։ ԲԱԶՄԱՎԷՊը՝ նորատիպ մատեանները, զորս իբրեւ նուէր կ'ընդունի, հակիրճ քննադատականով մը կը հրապարակէ։ Բաց աստի կը հրատարակէ Եւրոպական դասական ոտանաւորներու աշխարհաբար թարգմանութիւնք։ Քաղաքական տեսութիւն և ազգային թերթերու քաղուածոյ ցանկն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Կը ծանուցանենք որ, ԲԱԶՄԱՎԷՊ 1901ի առաջին պրակը՝ կը ղրկենք միայն անոնց, որոնք կը փութան կանխաւ նոր տարւոյ բաժանորդագինը խաւրելու։ Դարձեալ կը խնդրենք որ ոմանք որ դեռ այս տարուան ԲԱԶՄԱՎԷՊի բաժնեգինն չեն վճարած, փութան առանց երկրորդ անգամ ծանուցման կամ նամակագրութեան հաշիւնին գոցելու։ — Աւասիկ կը լրանայ երկու տարին՝ որ խմբագրութիւնս նոյն իսկ ճանապարհի ծախքն իր վրայ առած, շատ մը կրթական հաստատութեանց, ընթերցարանաց և այլ անհատական անձանց ձրի ԲԱԶՄԱՎԷՊ խաւրեց, այսուհետեւ կը ծանուցանենք որ եթէ փափաքելի է ձրի ընդունիլ նաեւ առաջիկայ տարուան պրակները, փութան իրենց յատուկ մեկենաս մը ճարելու։ — Չենք մոռնար ըսելու որ մեր օտար աշխատակիցները կը դադրին ձրի թերթ ստանալէ, երբ դադրին իրենց աշխատակցութենէն։ — Կը ծանուցանենք մեր հայ լրագրութեան յարգ. խմբագրաց, որ իրենց թերթի յօդուածոց ցանկը պիտի գտնեն մեր ծածկին վրայ, անոնք միայն, որոնք փոխադարձաբար և մեր պրակներուն բովանդակութիւնը կը բարեհաճին իրենց թերթին մէջ հրատարակելու. պատշաճութիւն մը, ուղղութիւն մը՝ զոր կը յարգեն Եւրոպական նշանաւոր թերթերը և լրագիրներն։ — Կը ծանուցանենք մեր քննադատներուն, որ ի զուր ԲԱԶՄԱՎԷՊէն պատասխաններ չի սպասեն, երբ իրենց յարձակողական քննադատութիւնը զուրկ լինի լրջութենէ, պարտ ու պատշաճ յարգանքէ և գիտական զօրեղ փաստերէ. կանխիկ պատասխաննիս ԼՌՈՒԹԻՒՆՆ է։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԲԱՑԱՌԻԿ ԲԱԶՄԱՎԷՊ պրակն։ Կը խնդրենք այն ամենէն, որ փափաք յայտնած էին զայն ընդունելու և դեռ բաժանորդագինը (2.50 ֆր.) չեն խաւրած, փութան զայն ղրկելու քանի որ օրինակներն ամբողջ չեն սպառած։

digitised by A.R.A.R.@